12.12.2022
350-78

ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության պետ Տաթև Մկրտչյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Մկրտչյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ կազմակերպություն է պատասխանատվության ենթարկվել ԻՇ հայտարարագրի սխալ լրացման պատճառով դրա գործարկումից ի վեր, խնդրում ենք տվյալները տրամադրել՝ ըստ ամիսների և տարիների։
2. Քանի՞սն են շտկել հայտարարագիրը և քանի՞սն են տուգանվել (վարչական)։
3. Քանի՞ բիզնեսի հայտարարագրի իսկություն է ստուգվել ԻՇ հայտարարագրման ինստիտուտի ներդրումից հետո, խնդրում ենք տվյալները հայտնել ըստ ամիսների և տարիների։
4. Քանի՞ աուդիովիզուալ (մեդիա) կազմակերպություն է հայտարարագիրը ներկայացրել սահմանված ժամկետից ուշ, քանի՞սը ընդհանրապես չի ներկայացրել։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am